ՆՈՐ-ԴԱՐ

№ 121 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 26 Յուլիսի 1888 Երեքշաբթի 26 Յուլիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 121

Տարեկան 10 բաբղի, վեց ամիսը՝ 6 բաբղի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., Հատը՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում՝ միայն խմբագրատանը։

Խմբագրության Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները քաղաքում նույնպես ամեն լեզուներով։
Յայտարարությունների գումարն 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։ Մեր դպրոցների տեսչությունը։ (վերջ) Ղաթաթաղի 1888 թ. բերքը։

Քաղաքական.—Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագրները։

Յայտարարություններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Անցեալ Համարում հաղորդել էինք, որ ս. Էջմիածնի հեմարանում հրդեհ է պատահել։ Այժմ մեզ հաղորդում են, որ հրդեհը սկսուել է գիշերած ըրդեքից և տարածուելով աննշարանը, այրել է 20-ի չափ անկողիններ, ջարդուփշուր են 80-ի չափ պատուհանները, շինուածքի տախտակե մասերը մասամբ վնասուել և մասամբ սևացել են կրակի ծուխից, իսկ մի մասն էլ քանդել են հրդեհն հանգցնելիս։ Հրդեհը տևել է մօտ մի ժամ։ Ինչպես յայտնի է, հեմարանն ապահոված է ռուսական հրդեհի դէմ ապահովութեան մօտ։

—

Թիֆլիսի 1 գիմնազիոնի վարչութիւնն յայտնում է, որ ժողովրդական կրթութեան պ. մինիստրի կարգադրութեամբ, այդ գիմնազիոնում կրթին թացվում է նախակրթարանը՝ տարեկան 50 ր. վարձով։ Խնդրողները ընդունվում են գիմնազիոնի կանցէլիարիայում մինչև օգոստոսի 15-ը, ամեն օր ժամը 9-ին մինչև 12-ը. նոր ընդունուողների քննութիւնները կսկսուին օգոստոսի 22-ից։ Միւս դասարաններում, տեղ չլինելու պատճառով, ընդունելութիւն չի լինիլ։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Օրերումս ռուսաց «Каспій» լրագրի հրատարակիչը փոխուեցաւ, և այժմ այդ պաշտօնը յանձն է առել պ. Գօրդէվսկին. ինչպես լսում ենք, չուտով խմբագիրն էլ պիտի փոխուի։ Ցաւ ունինք, որ խմբագրութեան նոր կազմութեամբ, այդ թերթը կաշխատի աւելի օգտակար կերպով ծառայել տեղային շահերին։

Միւս ռուս «Бакинскій Торгово-Промышленый листокъ» թերթն էլ, ինչպէս լուր է տարածուած, գալ տարուանից փոխելու է իւր պերքը և ընդհանուր լրագրական բովանդակութեամբ, ամենօրեայ մեծ թերթի է վերածուելու։ Իսկ նաւթային օրգան (Нефтяной органъ) կամ նոյն թերթի մի բաժինն է կազմելու և կամ շաբաթական մի անգամ, առանձին թերթով է հրատարակուելու։ Նոյնպէս լուր է տարածուած, որ այդ թերթի պատասխանութեան համար, տեղական հարուստներից մի ընկերութիւն է կազմուելու։

—Անցեալ ձմեռ տեղս բոլորովին ձիւն եկած չը լինելով, ամառուայ համար սառոյց էլ չը գոյացաւ։ Ով ծանօթ է տեղիս ոճերին, նա միայն կարող է իմանալ, թէ ինչ նշանակութիւն ունեն տեղացիների համար, ամառ ժամանակը, զովացուցիչ նիւթերը...խանութպաններն այդ առիթը օգտուեցան, որպէս զի փոշին նստի և անցորդների քիմքն ու աչքերը չլցնէ։ Կենտրական մեթերքների գներն միջակ են, Ձմերուկը և սեխը բաւական առատ են, բայց վերջինս այս տարի վատ է և անհամ։

—Ամառուայ շոգ եղանակներին, ամենայն տեղ մեծ նշանակութիւն ունեն քաղաքի այգիները և այլ զբօսավայրերը, որ գոնէ ցերեկուայ տօթից և անտանելի աշխատութիւններից յետոյ, մարդկի գնալով այնտեղները, փոքր ինչ կազդուրուին և Թարմ օդ ծծեն։ Միհանում, Բաղում և կան 3 հատ հասարակական այգիներ—«Ալէքսանդրեան»՝ որ գտնվում է Ծովի ափին, քաղաքի մի ծայրում, «Մօլօկանեան»՝ կիզրոնում և «Ցիցիանեան»՝ շուկայի մօտ։ Առաջինն ամենից մեծ է և գեղեցիկ, դրա մէջ է գետեղուած քաղաքային կլուբի ամարային չէնքը, այստեղ շաբաթական մի քանի օր էլ երաժշտութիւն է լինում։ Բայց իւր չափազանց հեռաւորութեան պատճառով, ամեն մարդ չէ կարողանում այնտեղ յաճախել։ Երկրորդ տեղը թէև լաւ է, բայց հսկողութիւն չլինելու պատճառով, օր աւուր փչանում է։ Եթէ դրա վրայ ինչպէս հարկն է նայեն, կարող է շատ գեղեցիկ զբօսավայր լինելու։ Երրորդն գրեթէ բոլորովին բարձի թողն է արուած, ծառերը կոտրատուած, ցանկապատները փշրուած, ուղիները և մարգերը փչացած և այլն։ Թա կարող է ամենալաւ և յարմարաւոր զբօսատեղի լինել, եթէ նորոգուի, առաջինը իւր տեղի պատճառով և երկրորդը, որովհետև այնտեղ է գտնվում քաղաքային աղբիւրը, որի վրայ բարձրանում է գեներալ Ցիցիանովի յուշարձանը (монументъ)։ Ինչպէս լսենք, դրա համար նոր ցանկապատներ են շինվում և այնուհետև կարգ ու կանոնի մէջ պէտք է դնուի։ Քաղաքային վարչութիւնն շատ լաւ կանէր, եթէ առանձնապէս ուշք դարձնէր վերջին երկու այգիների վրայ։

—Վառառականութիւնն ընդհանրապէս մեզանում ընկած դրութեան մէջ է գտնվում։ Սակայն չնայելով քեսատութեան, օրըստօրէ նորանոր խանութներ են բացվում։ Նաւթային առևտուրն ընդհակառակն շատ լաւ դրութեան մէջ է, մանաւանդ նաւթը խիստ շատ արտահանում են դէպի Բաթում։

—

Պետերբուրգ է ժամանել գինուորական ինժինէր-կապիտան Վ. Պ. Գևրասիմովը, որ Կովկասի վարչութեան կողմից ուղարկուած է անցեալ պարսկական պատերազմի ընթացքին կովկասեան զօրքերի պարսկներից խլած դրօշակները առնելու, որոնք այժմ գտնվում են Կապանակի տաճարում, ինչպէս այս դրօշները, նոյնպէս և Զուլֆայի վանքում պահուող դրօշակները պէտք է պահուին ներկայումս Թիֆլիսում կատարուող «Փառքի տաճար»-ի մէջ։ Այդ տաճարը պէտք է մուտքում պատրաստ և այնտեղ պիտի հաւաքուի այն ամենը, ինչ որ կարող է յիշեցնել Կովկասի նուաճումը, «Փառքի տաճար»-ի համարեա դէմքը, առաջնակարգ աշխատի պիտի ձեռնարկուի, «Нов. Вр.»-ի տեղով, մի մեծ տաճարի հիմնարկութեան 900 ամեակը, որի յիշատակի համար քաղաքի ծախսով հիմք դրին վերոյիշեալ մեծ իշխանի անուան եկեղեցու շինութեան։

—

Ինչպէս լսում է, պետական խորհրդի քննութեան առաջարկված է կանոնագրութիւն հաստատելու, օրիորդական գիմնազիոնների վերափոխութեան և, նոր հիմքերով, կանոնագրելու կուրսերը բանալու նախագիծը։ Օրիորդական գիմնազիոնների վերափոխութեան նախագծով առաջարկվում է այսուհետև այդ ուսումնարաններում ընդունել ոչ թէ բոլոր պատակարգերից աշակերտուհիներ, այլ բարձր պատակարգի աշկերներ։ Իսկ ինչ վերաբերում է կանոնագրելուն կուրսերին, նրանք պէտք է լինեն պետական ուսումնարանական հաստատութիւնների նման, որոնց կատարվելիքները պէտք է նշանակուին ժողովրդական կրթութեան մինիստրի կողմից որպէս տեսուչ և վերատեսուչ։ Կուրսերն երկու տեսակ են լինելու. մինը՝ պատմա-լեզուաբանական և մաթեմատիկական առարկաներն ուսումնասիրելու համար, իսկ միւսը՝ նոր օտար լեզուներ ուսումնասիրելու համար։ Առաջին տեսակի կուրսերը մտնելու համար հարկաւոր է տղայոց գիմնազիոնի ամբողջ դասընթացը գիտնալ և հաստատութեան վկայական ունենալ, իսկ միւսը մտնելու համար բաւական է ինստիտուտում կամ աղջկերանց գիմնազիոնի հոի դասարանն աւարտել։ Կուրս մտնողներից վկայական է պահանջուելու, որ նրանք բաւարար միջոց ունին ուսման վարձ վճարելու և լաւ ապրելու համար։ Երկրորդ կարգի կուրսերը պէտք է գիշերօթիկ լինեն. երեւեկ կարող են լինել միայն նոյն քաղաքի ազջկերքը։ Միւս կուրսերի մօտ էլ պէտք է աշխատեն հաստատելու աշկերտուհիների ապրելու ընդհանուր բնակարան։ Երկրորդ կարգի կուրսերում բոլորի համար պարտաւորիչ է լինելու աստուածաբանութիւնը, արտաքին, հոգեբանութիւնը, պատմութիւնը, լատիներէնը, հռոմական հնագիտութիւնը և հռոմական և արեւմտեան-եւրոպական գրականութիւնների պատմութիւնը։ Բայց այդ, ունկնդիրները, նայելով թէ ինչ հիւղ են ընտրել, պէտք է լսեն գերմանական կամ ռոմանական բարբառների կազմութեան պատմութիւնը, ներկայ գերմանական կամ ֆրանսիական քերականութեան պատմութիւնը և ներկայ քերականութիւնը, ուսումնասիրել գերմանական կամ ֆրանսիական հեղինակութիւնները և նրանց դասախօսելու մեթոդիկան և զբաղուել գործնականութեամբ։ Այս ամենի համար նշանակվում է չորս տարի ժամանակ, ինչպէս և միւս տեսակի կուրսերի համար, որոնց ծրագիրները շատ նմանութիւն են ունենալու հայմալսարանների ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտէտի պատմա-լեզուաբանական և մաթեմատիկական բաժինների հետ։

—

ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ.—Անձրև չգալու պատճառով մի քանի գիւղերի ցորենի ցանքսերը թէև բաւական վնասուել են, բայց և այնպէս յոյս կայ առատութեան։

—Գիշերները պատահող սաստիկ ցրտերից վնասուել են բաղչաների բանջարեղէնները։

—Անտանելի շոգերից յետոյ, վերջապէս յուլիսի 12, 13, 14-ին յորդ անձրևներ տեղացին։

—Ժամանակաւորապէս Սարիգամիշում բնակուող Թիֆլիսեցի գինուածառ Մ. Պապեանն իւր հաշուով Սարիղամիշի մերձակայ սարերից ազբիւր է բերել տալիս Սարիղամիշ, որի վրայ, ինչպէս լսում ենք, պարոնը բաւական մեծ ծախս է անում։ Այս մասին մենք կը խօսենք իւր ժամանակին, առ այժմ աղօղուելին ենք ցանկանում պարոնի այդպիսի առաջադեռնութեանը։

—

Կիւրակի, յուլիսի 24-ին, «Ծերօպա» այգում Հայ դերասանական խումբը Արզրումեան չքաւոր ընտանիքի օգտին տուեց մի ներկայացում, որից առաջացել է շուրջ 100 րուբլի. ծախսը դուրս գալով, մնում է մօտ 50 րուբլի։

—

Մեր թղթակիցների անցեալում հաղորդած տեղեկութիւններից արդէն գիտէ ընթերցողը, որ Կասպից ծովի վրայ Ուզուն-Ադայի և Կրասնովոդսկու մէջ մեծ մրցում կար այդ երկու նաւահանգստային քաղաքներից մինն ուժինին նախապատուելիւն տալու մէջ։ Ինչ ասել կուզէ, որ այդ երկու քաղաքի բնակիչներն էլ կը ցանկանային, որ նախապատուելիւնը իրենց քաղաքին տրուէր։ Այդ խնդիրը քննելու համար կազմուել էր մի մասնաժողով գլխաւոր շտաբում, որ պէտք է իւր գործը վերջացնէ մինչև օգոստոսի կէսը։ Ցանձնաժողովն որոշեն, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի ռուս Թերթերը, մի ժողովում վճռել է խնդիրը և նախապատուելիւնը միաձայն տուել է Կրասնովոդսկին, որի առաւելութիւնները բաւական պարզուած են սկզբունական խուզարկութիւններից և քննութիւններից։ Բայց աւելի անաչառ լինելու համար, յանձնաժողովը իւր անդամների մէջ չը գտնելով Ուզուն-Ադան պաշտպանող մէկը, կրկին դիմել է այդ քաղաքի նաւահանգստի առաւելութիւնները պաշտպանողներից հեղինակաւոր անձին՝ խնդրելով հաղորդել նոր փաստեր, եթէ կան այդպիսի փաստեր, որոնք յայտնուած կը լինեն Անդրկասպեան երկաթուղու գծի բացուելուց յետոյ։ Պատասխանները սպասվում են օգոստոսի սկիզբներին, ապա յետոյ Ժողովը երկրորդ նիստ կունենայ։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Ներկայումս այստեղ եղանակը սաստիկ տաք է. ցերեկը շոգի ձեռքից տնից դուրս գալ չէ լինում։ Մարդիս դրութիւնն աւելի անտանելի է լինում մանաւանդ երբ տօթի հետ խառնվում է և Բագուայ հանրահռչակ փոշխառան քամին։ Փողոցները պիզուած են մի արշինաչափ փոշով և այլ անմաքրութիւններով, որովհետև դրանց վրայ հսկող չկայ. ոչ ջրում են և ոչ էլ գոնէ աւազուայ նման փոքր ինչ մագուլ ցրուում, որպէս զի փոշին նստի և անցորդների քիմքն ու աչքերը չլցնէ։ Կենտրական մեթերքների գներն միջակ են, Ձմերուկը և սեխը բաւական առատ են, բայց վերջինս այս տարի վատ է և անհամ։

—Ամառուայ շոգ եղանակներին, ամենայն տեղ մեծ նշանակութիւն ունեն քաղաքի այգիները և այլ զբօսավայրերը, որ գոնէ ցերեկուայ տօթից և անտանելի աշխատութիւններից յետոյ, մարդկի գնալով այնտեղները, փոքր ինչ կազդուրուին և Թարմ օդ ծծեն։ Միհանում, Բաղում և կան 3 հատ հասարակական այգիներ—«Ալէքսանդրեան»՝ որ գտնվում է Ծովի ափին, քաղաքի մի ծայրում, «Մօլօկանեան»՝ կիզրոնում և «Ցիցիանեան»՝ շուկայի մօտ։ Առաջինն ամենից մեծ է և գեղեցիկ, դրա մէջ է գետեղուած քաղաքային կլուբի ամարային չէնքը, այստեղ շաբաթական մի քանի օր էլ երաժշտութիւն է լինում։ Բայց իւր չափազանց հեռաւորութեան պատճառով, ամեն մարդ չէ կարողանում այնտեղ յաճախել։ Երկրորդ տեղը թէև լաւ է, բայց հսկողութիւն չլինելու պատճառով, օր աւուր փչանում է։ Եթէ դրա վրայ ինչպէս հարկն է նայեն, կարող է շատ գեղեցիկ զբօսավայր լինելու։ Երրորդն գրեթէ բոլորովին բարձի թողն է արուած, ծառերը կոտրատուած, ցանկապատները փշրուած, ուղիները և մարգերը փչացած և այլն։ Թա կարող է ամենալաւ և յարմարաւոր զբօսատեղի լինել, եթէ նորոգուի, առաջինը իւր տեղի պատճառով և երկրորդը, որովհետև այնտեղ է գտնվում քաղաքային ազբիւրը, որի վրայ բարձրանում է գեներալ Ցիցիանովի յուշարձանը (монументъ)։ Ինչպէս լսենք, դրա համար նոր ցանկապատներ են շինվում և այնուհետև կարգ ու կանոնի մէջ պէտք է դնուի։ Քաղաքային վարչութիւնն շատ լաւ կանէր, եթէ առանձնապէս ուշք դարձնէր վերջին երկու այգիների վրայ։

—Վառառականութիւնն ընդհանրապէս մեզանում ընկած դրութեան մէջ է գտնվում։ Սակայն չնայելով քեսատութեան, օրըստօրէ նորանոր խանութներ են բացվում։ Նաւթային առևտուրն ընդհակառակն շատ լաւ դրութեան մէջ է, մանաւանդ նաւթը խիստ շատ արտահանում են դէպի Բաթում։

—

Պետերբուրգ է ժամանել գինուորական ինժինէր-կապիտան Վ. Պ. Գևրասիմովը, որ Կովկասի վարչութեան կողմից ուղարկուած է անցեալ պարսկական պատերազմի ընթացքին կովկասեան զօրքերի պարսկներից խլած դրօշակները առնելու, որոնք այժմ գտնվում են Կապանակի տաճարում, ինչպէս այս դրօշները, նոյնպէս և Զուլֆայի վանքում պահուող դրօշակները պէտք է պահուին ներկայումս Թիֆլիսում կատարուող «Փառքի տաճար»-ի մէջ։ Այդ տաճարը պէտք է մուտքում պատրաստ և այնտեղ պիտի հաւաքուի այն ամենը, ինչ որ կարող է յիշեցնել Կովկասի նուաճումը, «Փառքի տաճար»-ի համարեա դէմքը, առաջնակարգ աշխատի պիտի ձեռնարկուի, «Нов. Вр.»-ի տեղով, մի մեծ տաճարի հիմնարկութե-

կամ երաշտային լինելուցն է։ Քանի տարի է գոլովԻհին ունի այս հիւանդութիւնը Շուշու գաւառի պաղատու ձառերի մէջ։ Եղել են տարիներ, երբ այս հիւանդութիւնների միևնոյն կամ միւսը բաւականին նուազացրել է տարուայ բերքը, բայց այս տարուայ պէս տարօրինակ վնասներ չէ պատճառել։ Շատ գիւղեր ինչ բրնաւին Թուխ չեն Թափել, իսկ եղել են Թափողներ էլ, որ կամ կէսումն են ձեռք վերցրել Թափելուց և կամ չարունակել են մինչև վերջ, բայց բաւականին վնաս է նստել երենց վրայ։ Սօղմայից իսկ Թափուզ և չախկայից շերայ չհաւնեցող Թուխը կարասների և տակառների մէջ այնքան չէ խառնուել, եթուել մինչև հետը ջուր չեն ածել, իսկ այդ դրութեամբ օղի քաշելուց գրեթէ ոչինչ չէ դուրս եկել։ 200 բուբլի ակցիզ տուղը, (Թող դեռ տուած ԹԹի փողը և ուրիշ հարկաւոր ծախքերը), որ պէտք է առնուագը 60—70 կուժ օղի տանար, ընդ հակառակը 10—15 կուժ էլ չէ տացել։ Մի գիւղացի ախ ու վախ էր քաշում պատմելուց, Թէ ուրիշ ծախքերը Թոզած՝ միայն տուած ակցիզն այնքան օղի չէ բերել, որ կարողանայ նրա կէս փողը գոյացնել...

Ղարաբաղի ԹՔ արտերի և ԹՔ այգիների մի հինգերորդական մասը հազիւ կէսուակէս տուած լինին երենց բերքը։ Դեռ օղիի գնահատութիւն չէ եղել. գնողները շատ հեռու են փախչում, իմանալով, որ շատ Թանգ պիտի գնահատեն նրա տէրերը։ Կուժը (2 վեդրօ) 15 բուբլուց են ձայն տալիս քաղաքումս, մինչդեռ առաջ 8—9 բուբլի է եղել։

Այս տարուանից արտեղ է փոխուել Կովկասի հինգերորդ շրջանի ակցիզային կառավարութիւնը, որտեղ և որոշուած է մնալ՝ երբև գլխաւոր կենդրոն օղիի արդիւնաբերութեան։ Եւ արդարև, Ղարաբաղը Ելիսաւետպոլի նահանգի մէջ Խմիչքի արդիւնաբերութեան կողմից նշանաւոր տեղն է բռնում. ուստի և այդ պատճառով կարգադրուել է Շուշում լինել ակցիզային կառավարչութիւնը, Թէպէտև Ելիսաւետպոլը, երբև նահանգական քաղաք, մինչև այսօր այդ կառավարութիւնը իւր մէջ է ունեցել։

Ղարաբաղցիների մի գործն էլ կազմում է չերամապահութիւնը, որը Թէև ամեն գիւղի մէջ բնդհանրացած չէ, սակայն եղած տեղն էլ ժողովրդի ցանկացած օգուտը տուել է։ Այս տարի այստեղ չերամապահութիւնն ևս գոհ գնաց եղանակի վատութեան. խոնաւութիւնը և անձրևները դեղնացաւ ձգեցին որդերի մէջ և կոտորեցին։

Թաղոզի այգիներն ևս այժմուանից լաւ նշաններ չեն ցոյց տալիս. երաշտութիւնից մոխիր և մահաժ հիւանդութիւնները դիպել են Թաղոզին և նպաստել Թաղոզի և չերայի նուագման։ Գինու մեծ առևտուրով պարապողները գուշակելով գինեգործութեան անմխիթար վիճակը, այժմից սկսած հին գինիները, արտեղ կան, հաւաքում են առաջիկայ տարուայ համար։

Գարձեալ գիւղացիների մէջ առևտուրով պատապողների տասլարիզը մնում է Թուրքերին.—Նրանք են, որ օրն ի բուն քաղաքիս չուխաներում կաԹ և մածուն են ծախում, նրանք են, որ ոչխարների հօտերը սարերն արած Թող և պանիր են մատակարարում ժողովրդին, և վերջապէս նրանք են, որ վարունկ, սեխ և ձմերուկ (որ այս տարի շատ աւատ է) ամեն օր սայլերով բերում են քաղաք վաճառելու։

Ինչ է մնում խեղճ հայ գիւղացիներին անել։

—Թիմել վաշխառուներին և տասին հինգ տոկոսով փող վերցնելով պարտքի տակ Թուրաձ մնալ և վերջում եղած չեզածը, տուն ու տեղը վաշխառուին տալով գլուխը վերցնել և դէպի պանդխտութիւն փախչել։

Արգամ.

Շուշի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ.—Իշ. Բիսմարկը օգոստոսի սկիզբներում կ'ուղևորի Կիսինգէն իւր փեսի՝ գրաֆ Բանդաուի ուղեկցութեամբ։ Կարծում են, որ այնտեղ կայանալու է երեք մինիստրների՝ իշ. Բիսմարկի, Կայզերի և Կրեսպիի տեսակցութիւնը։ Այնտեղ սպասվում է և իշ. Հօհենլօհէն։

—Մեզի լրագիրները հաղորդում են, որ Էլզասում էլ գերմանական կառավարութիւնը մտադիր է գործադրելու այն քաղաքականութիւնը, ինչ որ գործ է ածում իւր արևելեան նահանգներում՝ լեհական երկիրներից գերմանացնելու համար։ Սակայն գերմանացիներն երենք էլ խոստովանում են, որ այդ շատ դժուար գործ է, որովհետև, այն մեջոցին, երբ լեհական ազնուականները ստիպուած են իրենց կալուածները ծախել պատքաստչների ձեռքերից ազատուելու համար, Էլզաս—Լոթարինգիայում բոլորովին հակառակն ենք տեսնում, այստեղ ժողովուրդը հարուստ է և կարիք չունի իւր կալուածները ծախելու։

ՉԵՐՆՕԳՕՐԻԱ.—Չերնոգօրիայի մայրաքաղաքից՝ Ցէտինիայից հաղորդում են, որ երկրի իշխանն շտապել է իւր ձեռնարկած ուղևորութիւնից վերադառնալու, որովհետև երկրի մէջ քաղցածութիւնն աւելի և աւելի տարածվում է և սոփ երկիղ կայ։ Ինչպես յայտնի է, այս տարի ձմեռը սաստիկ խիստ եղաւ։ Չերնոգօրիայում, որից մեծապէս վնասուեց երկրի ժողովուրդը, որ առանց այն էլ հարուստ չէր։ Թէև յաւետեան երկիրներում ձեռնարկեցին հանգանակութիւններ սկսել Չերնոգօրիայի Թշուառների օգտին, բայց աղօղութիւն չունեցաւ այդ։

ԱՒՏՐԻԱ-ՈՒՆԳԱՐԻԱ.—Վերջին ժամանակներս մի քանի պետութիւնների մէջ նկատվում է զօրքերի տեղափոխելու, զօրախաղեր կազմելու մեծ չարժում։ Այդ միևնոյնը բաւական ժամանակէ ի վեր նկատվում է և Աւստրիա-Ունգարիայում։ Կրակօվից էլ այս մօտերքս հետագրում են ԹերԹերին, որ Թագաժառան Բագօլիքը ժամանել է այնտեղ՝ տեղի զօրքերն վերագրեելու և զօրախաղեր կազմելու նպատակով։

ԲՕԼԳԱՐԻԱ.—Բոլղարական կառավարիչները վերջի ժամանակներս առանձնապէս ուշադրութիւն են դարձրել երկրի պատերազմական դրութիւնն աւելի ևս զօրացնելու վրայ։ Սօֆիայից հաղորդում են, որ Մուտկուրովը պնդել է բոլղարական բանակում եղող զօրքերի Թիւը նշանաւոր չափով աւելացնելու մասին։

ԱՖՐԻԿԱ.—Էմին-փաշան մօտենում է ԽարԹումին։ Այդ այլ ևս կասկածի առարկայ կարող չէ լինել։ Օմդուրմանից Գահիրէ հասած պնդադեսպանը լուր է բերել, որ Սալիտակ-փաշան, որ Բահր-էլ-Գազէրից մեծ զօրքով դէպի հիւսիս է գալիս, ոչ այլ օք է, եԹէ ոչ Էմին-փաշան։ Արդուլ-լա-Խալիֆա մագդին մտադիր է ինքն անձամբ բազմաԹիւ բանակի գլուխ անցած, շարժուել նրա դէմ։

—Հեռագիրն արդէն մեզ հաղորդեց, Թէ իտալական կառավարութիւնը պետութիւններին հաղորդել է, որ Մուսաուան վերջնականապէս միացրել է իւր երկիրներին։ Մեր ստացած լրագիրները հաղորդում են, որ Ֆրանսիան և Թիւրքիան գժգոհ են դրանից։ Այդ լրագիրների ասելով, մինչև իսկ Ֆրանսիան մտադիր է եա կանչելու իւր դեսպանին, իսկ Թիւրքիան—գէնքով դիմադրելու դրան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վատանգաւոր յուսկամանեք.—Օդեսայում երկու դէպք է պատահել, որոնցից յայտնի երևացել է, որ նորահնար «ինքնավառ» յուսկամանները (Թիֆլիսում յայտնի են դրանք «Սպգի-կարնօ», «Բուլանժէ» և այլ անուններով) կատարեալ վտանգաւոր բաներ են։ Մէկ երեսաստը, որի գլխանումը լինում է «ինքնավառ», գնում է դբօսնելու Աւէքսանդրեան պարկը. այդ ժամանակ անձրևում էր. երեսաստարդի շորերը Թրջուեցան։ Յանկարծ մի սաստիկ պայԹիւն լսուեց... Երեսաստարդն բնկաւ գետնի վրայ. մի վայրկենում նրա Հետ ոտը պատած էր կրակով։ Ադատակների վրայ հաւաքուած հասարակութիւնն ուզում էր խեղճ տղային ազատել, սակայն դժուար էր նրան մօտենալ, որովհետև Հայտած նատրնի, որը գործիքի վառօդ նիւԹըն է կազմում, այնման մեջոցին տարածում էր նատրնի Թթուաւոր Թուհնաւոր և կծու գազեր։ Այդուդ մարդուց Հեռու կանգնածները սկսեցին ջերի կտորներ ձգել նրա վրայ, որով վերջապէս աջողուեց կրակը մարել։ Միևնոյն դէպքը պատահել է նաև մէկ երեսայի՝ բուսարանական այգում անձրևի ժամանակ։ Ցեղական ոտիկանութիւնն արդէն մեջոցներ է ձեռք առել «ինքնավառի» դէմ։

* * *

Աւստրալիայի մի նոր խնդիր.—Berliner Fremdenblatt»-ը հաղորդում է, որ գերմանական երեսաստարդ կայսրուհի Աւգուստինա-Վիկտորիան իւր ամուսնու ձեռքով Ռուսկայի կայսրուհուն մի հովհար է ուղարկել նուէր։ Փայտի կոթի վրայ Բերլինի ամենաերևելի աբուեստագէտներից մէկը փորագրել է գերմանական զոյգ օրդների պատկերները։ Ինքը կայսրուհին հովհարի վրայ գրել է Ս. Գրքից, որ հզօր մեսպետները պէտք է սիրով ասլին Սպիտակ moiré-ից շինած արկղիկի վրայ Աւգուստա-Վիկտորիա կայսրուհին իւր իսկական ձեռքով ասեղնագործել է Թագուհու-կայսրուհու անուան սկզբնատառերը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի.—Հեցելազօրքի գեներալ Բարակովը վախճանուեցաւ։

ԿԻԵՎ.—Երէկ այստեղից ճանապարհ ընկան ալաւեանական հիւրերը։

ԲԵՐԼԻՆ.—Վիլհելմ կայսրը՝ Փրիդրիխսրուհէում իշխան Բիսմարկի մօտ ճաշից յետոյ, ուղևորեցաւ դէպի Պոտսդամ։

ԲԷԼԳՐԱԴ.—Իտալիայի օրգան «Սերբական ազատութիւնը» մի կծու յօդուած է հրատարակել Աւստրիայի դէմ, որին համարում է Սերբիայի բոլոր թշուառութիւնների պատճառ։ Լրագիրն ասում է, որ Աւստրիան միշտ ձգտել է Սերբիան և սերբիական ազգայնութիւնը ոչնչացնելու։

Կ. ՊՕԼԻՍ.—Այսօր հրատարակուեցաւ Սուլթանի իրադէն, որ Հաստատում է մինիստրական այն կարգադրութիւնը, որով իրաւունք է տրվում բարձր Դիրշին՝ օգտուել արևելեան երկաթուղու բելօվօ վակարէլեան բաժնից։

ԼՕՆԴՕՆ, 22 յունիսի.—Ամբողջ Անգլիայում անընդհատ տնձրևներ են գալիս, որոնցից առաջանում են աւերող հեղեղներ։ Տեղ տեղ Հունձը բոլորովին ոչնչացած է։ Լօնդօնի արևելեան կէսի մեծ մասը, ուր գտնվում է ժողովրդի ամենաաղքատ դասակարգը, հեղեղը ծածկել է. բնակիչները մեծ կարիքի մէջ են։

ՊԱՐԻԶ.—6-րդ արմատական կօրպուսի մեծ զօրախաղութեանը, որ տեղի պիտի ունենայ առաջիկայ աշնան, առանձին նշանակութիւն են տալիս։

Պահեստի զօրակոչը տեղի չի ունենալ. զօրաբաժինների զինուորների թիւն աւելացնելու համար, գործ կածուին գիւղական զօրաբաժիններ։ Իւրաքանչիւր բատալիօնի զօրքի թիւը կը Հասնէ մինչև 600 Հոգու, իսկ ամեն մի էսկադրօնինը՝ մինչև 100 ձիի։ ԸնդՀանուր զօրախաղին կը մասնակցին 28 բատալիօն, 36 էսկադրօն, 15 բատարէյ և 2 վաշտ (рота) երկրաչափների զօրք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Սեգլէյի փոխնահանգապետ Մաիլէվսկին նշանակուած է Բաղմի նահանգապետ։

ԲՈՒԿԱՐԵՍՏ.—Միջոցներ են ձեռք առնուած Ֆօքշանը և Գալացն ամրացնելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Պետերբուրգի բօրսա.—Թիֆլիսի Հողային բանկի հիմնաթղթերի արժէքն է 98½ րուբ., Քուրթայիսինը՝ 98 րուբ., Թիֆլիսի քաղաքային վարկի բնակութեան օբլիգացիաները՝ 82½ րուբ. գն.։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի.—Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ «Сибирская газета» թերթի հրատարակումն ուժ առով դադարեցրած է։

«Нов. Вр.»-ն լսել է, որ Սպրատով-Սիմբիրսկի բանկում տեղի ունեցած վատնումների գործը սեպտեմբերի կէսին քննուելու է Մօսկվայի նահանգական դատարանում։

ՎԵՐՆԸՅ.—Երէկ առաւօտեան ժամը 5-ին վերջացաւ գնդապետ Խարինոկուն սպանողների զինուորական դատը։ Գնդակահարութեան դատապարտուած են բերդային վաշտից չորս Հոգի ստորին աստիճանաւորներից՝ Ֆելդֆեբել Սամսոնովը, Ֆելդվերկեր Պաշնինը և Պօպով ու Կլապով կանոնիրները։ 10 Հոգի դատապարտուած են տաժանակիր աշխատանքի 15 տարի և բեռների գրաւականով։ Փոխատուութեան քանակը Հացի արժողութեան 60%-ից չպիտի անցնի։ Փոխ կարելի է տալ ½ տարով և առանց վճարման ժամանակը որոշելու։ Տոկոսները սահմանում է արքունի գանձարանն և բացի դրանից փոխառուից ⅓% է առնվում փոխից հիմնական գրամագլուխ կազմելու համար և ոչ աւելի ⅓% փոխից՝ փոխատուութեան գործողութիւնը կատարելու ժամանակ ճանապարհների ծախսերը ծածկելու համար։

ՏՕՄՍԿ.—Երէկ բացուեցաւ Տօմսկի համալսարանը։ Համալսարանի եկեղեցում կատարուած Հանդիսաւոր ժամասացութիւնից յետոյ, ներկայ եղողները գնացին Հանդէսի գահլիճը, որտեղ ուսումնարանական շրջանի Հոգաբարձու Ֆլորինսկին կարդաց բժշկական մասնաճիւղի բացման Բարձրագոյն Հրամանը և համալսարանը բացուած յայտնեց, որի միջոցին համալսարանի դերի մասին ճառ խօսեց։ Հոգաբարձուն վերջում կարդաց շնորհաւորական Հեռագիրներ, որոնք ուղղուած էին. Մեծ Իշխան Կոնստանդին Նիկոլայեվիչից, ներքին գործերի և լուսաւորութեան մինիստրներից, համալսարաններից և ուսումնարանական Հաստատութիւններից. կարդացուեց Սիբերի համալսարանի խնդրին վերաբերեալ պատմական գրութիւնը, որի մէջ յիշատակուած են Թագաւոր Կայսրի, Մեծ Իշխանների, մինիստրների և մասնաւոր անձերի այդ Հեռաւոր երկրի Համար արած Հոգացողութիւնները։ Հանդէսը վերջացաւ ճաշով (ստարագրաւ Թեամբ) ու ժողովրդական զբօսանքով՝ Հանդերձ Հրաշագործութեամբ։ Համալսարանի շէնքն ու պարտէզը հիանալի կերպով լուսաւորուած էին։

ԼՕՆԴՕՆ.—Ապտեղ լուր է ստացուած, որ իտալական մի զօրախումբ գրաւել է Մուսաւայից Հարաւ գտնուղ Զուլու նաւահանգիստը, միևնոյն ժամանակ յայտարարուած է, որ նաւահանգիստն ու իւր շրջակայքը Իտալիայի գերիշխանութեան տակ են գտնվում։ Լօրդերի պալատում Սալսբիւրին յայտնեց, որ Իտալիան Անգլիայի գիտութեամբ է գրաւել Մուսաւան, որի պատճառով վերջինս ստանձնել է համապատասխան պայմանաւոր պարտաւորութիւններ։ Մինիստրը յոյս յայտնեց, որ Մուսաւայի խնդիրը ընդհարում չի պատճառիլ։

ԲՈՒԿԱՐԵՍՏ.—Մի Հոգոններ են ձեռք առնուած Ֆօքշանը և Գալացն ամրացնելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Պետերբուրգի բօրսա.—Թիֆլիսի Հողային բանկի հիմնաթղթերի արժէքն է 98½ րուբ., Քուրթայիսինը՝ 98 րուբ., Թիֆլիսի քաղաքային վարկի բնակութեան օբլիգացիաները՝ 82½ րուբ. գն.։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի.—Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ «Сибирская газета» թերթի Հրատարակումն ուժ առով դադարեցրած է։

«Нов. Вр.»-ն լսել է, որ Սպրատով-Սիմբիրսկի բանկում տեղի ունեցած վատնումների գործը սեպտեմբերի կէսին քննուելու է Մօսկվայի նահանգական դատարանում։

ՎԵՐՆԸՅ.—Երէկ առաւօտեան ժամը 5-ին վերջացաւ գնդապետ Խարինոկուն սպանողների զինուորական դատը։ Գնդակահարութեան դատապարտուած են բերդային վաշտից չորս Հոգի ստորին աստիճանաւորներից՝ Ֆելդֆեբել Սամսոնովը, Ֆելդվերկեր Պաշնինը և Պօպով ու Կլապով կանոնիրները։ 10 Հոգի դատապարտուած են տաժանակիր աշխատանքի 15 տարի և

աւելի ժամանակով. մի քանի հոգի գատապարտուած են ազգիչ պատժի, 10 հոգի արգարացել են, իսկ 14 հոգու գատապարտեալների գործը պիտի ուղարկուի Օմսկ բարձր գատարանի Հատատուռթեան։

ԲԵԼԳՐԱԴ.—Սերբիական կոնսիստորիան դիմել է Նատալիա թագուհուն գրաւոր կերպով առաջարկելով նշանակել հաւատարմատար, որ ներկայացուցիչ լինի ապահարգանի գործի քննութեան միջոցին։ Այնուհետեւ կոնսիստորիան արձակուրդի միջոցին ընդհատեց իւր գրագմունքները և միայն աշնան կսկսի թագաւորի ապահարգանի խնդիրը քննել։

ԲԵՐԼԻՆ.—Սիլեզիայից և Էլբինգից Հաղորդում են, որ յորդ անձրեւներից գետերը դուրս են եկել ափերից, շատ տեղերում երկաթուղիների հաղորդակցութիւնները ընդհատուած են. գաշտերը մեծ մասամբ աւերած են։ Նոյնպիսի տեղեկութիւններ ստացուած են և Բօհեմիայից, Զուրիցերիայից և Ֆրանսիայից՝ Հռօնի հովտում։

ՎԻՆՆԱ.— Այստեղ ժամանեց Սերբիայի թագաւորը թագաժառանգի հետ։

ՀՌՕՄ.— Իմամարկը վատիկան ուղարկել է ծանուցագիր, որով յայտարարում է, որ Վիլհելմ կայսրի ուղևորութիւնը գէպի Հռօմ, ամենևին վիրաւորական կարող չէ լինել պապի համար. որովհետև բացառապէս պատերազմական նկատումներից է դա առաջացել.— Ֆրանսիայի հետ պատերազմ ծագած միջոցին, Գերմանիան կարող է վստահել Իտալիային, որ Ֆրանսիայի գէմ կէս միլիօնի բանակ կը հանէ։ Կայսրը ցանկանում է ամրապնդ Եւրոպայի առաջ վկայել, որ Գերմանիան և Իտալիան կապուած են պատերազմական կապերով։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

21 Յունիսի

Լօնդօն 105,40 ր., 105,25 ր.,
Համբուրգ 51,52, 51,40 ր.
Պարիզ 41,60, 41,50, ր.,
Պօլուիմպերիալ . 8 ր. 49 կ. սակ.
Մաքս. կուպօն 169 ր. 50 կ. սակ.
Արծաթ . . . . 1 ր. 30 կ. սակ.
Բօրսային պիս. 6 և 7½%
Պետակ. բանկի 5% տոմս.
1-ին շրջանի. . 99 ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 98 ր. 62 կ. սակ.
3-րդ . . . . . 98 ր. 25 կ. գն.
4-րդ . . . . . 98 ր. 50 կ. գն.
5-րդ . . . . . 98 ր. 50 կ. սակ.
6-րդ . . . . . — ր. — կ. սակ.
Վերջին 4% . 82 ր. 62 կ. գն.
փոխառութիւնը
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր,
1-ին շրջանի . 99 ր. 37 կ. սակ.
2-րդ . . . . . 99 ր. 37 կ. սակ.
3-րդ . . . . . 98 ր. 87 կ. սակ.
Առաջին 5% ներքին փոխառութեան
տոմսեր . . . 268 ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 251 ր. 50 կ. սակ.
5½% բէնտեր . 101 ր. 75 կ. սակ.
Ոսկէ բէնտ . . 184 ր. — կ. սակ.
Թիֆ. քաղ. վարկի բնկերք.
օբլեգ. . . . — ր. — կ. Ծ.
Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-Հրատարակիչ։

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

GUARANA
De GRIMAULT et C-e
Pharmaciens à Paris
autorisé en Russie
ԳՈՒԱՐԱՆԱ
Պարիզի Գրիմօ և ընկ. Դեղագործ Հաւանելի

Սոյն փոշու մի ծրարը բաւական է ամենաստիպ գլխացաւը, ամենակօրեայ անգաւը (migraine, митрень) բժշկելու։ Այս բուսական դեղն իւր քիմական կազմութիւնը մեծապէս օգնում և բժշկում է փորացաւը։
Ընդունւում է փոքր ինչ շաքարախառն ջրի մէջ ածելով։
Ամեն մի տփի մէջ 12 ծրար կայ, որոնց վրայ գտնւում է Grimault et C-e ստորագրութիւնը։
Ծախւում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8 դէպօում և գլխաւոր դեղավաճառների մօտ. Տ
(Մ.) գ 27—1

РОДИЛЬНЫЙ ПРІЮТЪ
акушерки
С.З.ХИЗАНОВОЙ
Сололаки. Садовая ул., д. № 42.
ԾՆՆԴԱԲՈՒՆ
ՄԱՆԿԱԲԱՐՁ
ՍՕՓԻԱ ԽԻԶԱՆԵՆԱՆ
Սոլոլակի, Սադովայա փողոց, տ. № 42.
Թէ ցերեկուայ և թէ գիշերուայ ամենայն ժամանակ՝ ընդունւում են յղիները, երկունքով բռնուածները (ցաւղները) և ծննդականները, որոնք խնամւում են շարունակ մանկաբարձի հսկողութեան ակ. տրւում է նրանց նաև սպիտակեղէն և կերակուր։
Ծննդի և ծննդին հետևող շրջանի խնամատարութեան համար վճարում են՝ 50 րուբլի (առանձին սենեակում) և 10-ից մինչև 30 րուբլի (ընդհանուր սենեակներում)։
Օրական 1-ից մինչև 3 րուբլի։
X—8

PHOSPHATE DE FER
De LERAS, Docteur ès-sciences.
Դեղագործ Լերասի
ՖՕՍՖԱԹ ԴԸ ՖԵՐԸ
Այս դեղն արիւնն և ոսկրները վերանորոգելու և զօրացնելու համար գործածուած դեղօրէից ամենաազդուն է։ Ն. պնդութիւն է պատճառում, ոչ ատամոքսն է յոգնեցնում և ոչ էլ ատամները է սևացնում, մինչ մեծ աջողութեամբ բժշկում է կանանց սպիտակ հոսումը, ատամոքսի ցաւը, ախտածութիւնը, արեան պակասութիւնը, միով բանիւ այն ամեն հիւանդութիւնները, որոնց ենթակայ են փափուկ կանայք և դեռատիների աղջիկները և մանուկները, երբ ուժգին, անարիւն, թուլամորթ և անախորժ են։
Ծախւում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ. Տ
(Մ.) գ 27—1

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ ունի պետական ուսումնարանների ուսուցչի վկայական, կամենում է գատական քաղաքներում գասեր ունենալ Հայոց ուսումնարաններում ռուսաց լեզուից և ռուսաց պատմութիւնից ու աշխարհագրութիւնից։ Հասցէն՝ Телавъ. учителю Степану Ивановичу Теръ-Саркисянъ.
5—5

Ընդունում եմ ամեն տեսակ և ամեն լեզուներով յայտարարութիւններ առաջիկայ 1889 թուականի իմ կազմելիք «ՀՍՅՈՒՍ Օրացոյցի» Յաւելուածի բաժնում տպագրելու համար։ Յայտարարութեան վճարը՝ տողը 16 կոպ.—38 կոպ. է։
Յանկացողները կարող են դիմել իմ գրախանութը, Թիֆլիսում, Մքալէնեան կամուրջի վրայ №№ 29—30.
Մակար Ձմշկեան։
5—4

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,
որ աւարտել է Ներսիսեան դպրանոցը և վարել է ուսուցչութեան պաշտօն Հայոց ուսումնարաններում, ցանկանում է գասեր ունենալ Հայ ուսումնարաններում ձեռնտու պայմաններով։
Պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։
10—7

Խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի անձերին, որոնք իմ Հանգուցեալ ամուսին Ազէքսանդր Աբրահամեանի
«ԳԱԻԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ»
Գրքի համար բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, բարեհաճեն ուղարկել ինձ բաժանորդագրութիւնները և գրամը, որպէս զի կարող լինենք տպագրելու բաժանորդների ազգանունները, որովհետև արդէն տպագրութիւնն աւարտուած է։
Հասցէն՝ Тифлисъ, Шушаникъ Араратяну. Ѳоминая ул. № 15, д. Давришева.
(Ազ.) 5—3

ԽԱՐԿՕՎ
„ՐՕՍՍԻԱ“ „ԷՐՄԻՏԱԺ“
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՀԻՒՐԱՆՈՑՆԵՐ
Երկուսն էլ ամենալաւ՝ Եկատերինօսլավկի փողոցի վերայ։
Սենեակները բոլոր յարմարութիւններով 1 ր. մինչև 10 ր. օրը. ընտանիքի համար բնակարաններ։ Վաննաներ։ Կառքեր՝ բոլոր գնայքների համար։ Օրինակելի խոհանոց.—Ճաշ՝—60 կ., 80 կ., 1 ր., 2 ր. և á la carte. Նախաճաշը 30 կ., ընթրիքը՝ 40 կ. բաժինը։ Ամենալաւ վաճառատների և նր սեփական պատրաստած գինիներ։ Ունի իր կաթնային տնտեսութիւն և լուացարան։ Անթասիր սպասաւորներ. «ՐՕՍՍԻԱ»յում առաջնակարգ պանդոկ՝ ասանձին ճաշերնջանկերով. ՕՐԿԵՍՏՐԻՕՆ։
Հիւրանոցների տէր՝ **ՆԱՊԵՓՓԻՆ ՐՈՒՖ**
(Մ.) 26—12

№ 6.

ԿԵՕԼԷՐԵԱՆ ԾԱՂԿԱՅԻՆ ՁՈՒԻՐ

(Ծաղկային ս-պը-կօյն)
Տալէտասնի յատ ջրեր գնահատականների և գիտակների համար։
Վաճառվում է՝—գատառներում բոլոր փոքր և չատ նշանաւոր առևտրականների մօտ, իսկ Մոսկվայում—
Ր. ԿԵՕԼԷՐԻ և ԸՆԿ. մօտ, Նեկօլսկայա փողոցի վրայ։
(Մ. 46,215) 3—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է ԲՆԱԿԱՐԱՆ

որ բաղկացած լինի 6 կամ աւելի սենեակներից և գտնուի Փօլովինակի պրօսպէկտի, Լօրիս-Մելիքեան և նրանց կից փողոցների վրայ։ Պայմանները յայտնել «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ աւարտել է իւր ուսումը Թիֆլիսի Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտում և մի քանի տարի վարել է ուսուցչական պաշտօն Հայոց Ծխական-եկեղեցական դպրոցներում, ցանկանում է գասեր ունենալ նոյնպիսի դպրոցներում։ Կարող է դասախօսել ռուսաց լեզու, Թուաբանութիւն, ռուսաց պատմութիւն, աշխարհագրութիւն, նկարչութիւն ու վայելչագրութիւն։
Պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան.
6—2

ՀԱՐԿԱՒՈՐ Է մի վարժուհի, որ կարողանայ Հայոց եկեղեցական-ծխական օրիորդական դպրոցում ռուսաց լեզու դասախօսել։ Հասցէն իմանալ «Նոր-Դար»-ի խմբագրատանը.

№ 14.

Z-BOUQUET — Զ-ԴՈՒԽԻ

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ Ր. ԿԵՕԼԷՐԻ և ԸՆԿ. ԳՈՐԾԱԲԱՆԻՑ

Ինչպէս «Z» տառը վերջինն է այբուբէնի մէջ, այնպէս էլ այս նոր դաշխինների բաղադրութիւնը վերջին խօսքն է անուշահոտ իրերի արտադրութեան արուեստի մէջ։ Իւր մէջ ամփոփելով Ֆրանսիական և անգլիական դաշխինների բոլոր լաւ յատկութիւնները, նրանք նշանաւոր են իրենց զարմանալի նուրբ և գեղեցիկ հոտով, չխայելով, որ նրանք իրենց բարկութեամբ անցնում են նոյն իսկ անգլիական դաշխինները, և ամենևին չեն կորցնում իրենց հոտը գործածութիւնից։
Վաճառվում է՝—գատառներում բոլոր փոքր և չատ նշանաւոր առևտրականների մօտ, իսկ Մոսկվայում—
Ր. ԿԵՕԼԷՐԻ և ԸՆԿ. մօտ, Նեկօլսկայա փողոցում։
(Մ. 46,239) 3—1

ԴՈՒԲԱՅԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՊԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր է մի ուսուցիչ ռուսաց և նոյն լեզուով աւանդելիք առարկաների համար։ Պայմանների մասին կարելի է դիմել Թիֆլիսում՝ «Նոր-Դար» ի խմբագրատանը ալ. Խաչատուր Փանեանցին, իսկ Դուբա՝ տեղիս Հայոց ուսումնարանի Հոգաբարձութեան իրենց պայմաններով։
5—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ուզում է բնակարան ունենալ իւր բոլոր պիտոյքներով. նոյնպէս ճաշ. կարելի է և առանց ճաշի։ Բնակարանը պէտք է լինի Պրօսպէկտի մօտիկ փողոցներում։ Հասցէն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

ՀԱՐԿԱՒՈՐ Է մի վարժուհի, որ կարողանայ դասախօսել Հայոց եկեղեցական-ծխական դպրոցում ռուսաց լեզու, գծագրութիւն և վայելչագրութիւն՝ շաբաթական 16 դաս. պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ

ԿԵԶՈՒ ԲԱԼԶԱՄԱՆ

Մէկ սրուակի գինն է 1 ր. 65 կոպէկ։

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ՕՊՊՕ ՊՕՄԱԴ
ս և է Կօլդ-Կրէմից լաւ է մի ամանը 1 րուբլի.

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ԲՕՆԶԱՆ ՕՃԱՌ
½ կտորը 50 կ., ½ կտորը 35 կ.

Ուղարկելու ծախսը առանձին է հաշվում։ Վաճառվում է Ռուսիայի բոլոր գեղավաճառանոցներում և գեղատներում։ Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար է Վ. ԱՌԻՐԻԽԻ մօտ, Պետերբուրգում, Սարէմեանսկայա, 4.
ԹԻՖԼԻՍՈՒՄ.—Դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան բնկերութեան, և Գրիվնաիի մօտ։ 46—41
(Մ.)

Дозволено цензурою. Тифлисъ. 25-го Іюля 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրասենեակի։ Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова.